ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 Գյումրի Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2025 թվականի N 2488-Ա

## ԱՎԵՏԻՍ ԳՈՒՐԳԵՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի շահերից և Գյումրի համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության 20-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն կոմիտեի հանրային ծառայության շահերի դեմ ուղղված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Արթուր Սարգսյանի՝ 2025 թվականի հոկտեմբերի 20-ի «Մեղադրյալին ձերբակալելու մասին» որոշումը.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար Վարդան Կոլյայի Ղուկասյանի բացակայության ժամանակ Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ավետիս Գուրգենի Առաքելյանին համարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին փոխարինող՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2025-10-22 14:13:27 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
miD

ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ք. Գյումրի, 2025 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**«20» հոկտեմբերի 2025 թվականի N 2487-Ա**

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ՏՐՎԱԾ N179/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տարոն Ասատրյանին Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փող. N4/8 հասցեում բնակելի տան ( ընդ. մակ.- 118.1 քառ.մ; երկրորդ կատեգորիա) և պարսպի (կառ. մակ.- 17.2քառ.մ), նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2023 թվականի հոկտեմբերի 6-ին տրվել է N179/23 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2023 թվականի հոկտեմբերի 6-ին տրված N179/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

2025-10-20 09:56:05 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

miD

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» նոյեմբերի 2025 թվականի N 2486-Ա

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ՏՐՎԱԾ N177/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմեն Բադալյանին Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փող. N4/11 հասցեում բնակելի տան ( ընդ. մակ.- 119.0 քառ.մ; երկրորդ կատեգորիա) և պարսպի (կառ. մակ.- 17.2քառ.մ), նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2023 թվականի հոկտեմբերի 6-ին տրվել է N177/23 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2023 թվականի հոկտեմբերի 6-ին տրված N177/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**
**2025 թ. ք.Գյումրի**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» նոյեմբերի 2025 **թվականի** N 2485-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 2366-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամաս 9-րդ փողոց № 18/1 հասցեի 481.29 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2366-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամաս 9-րդ փողոց № 18/1 հասցեի 481.29 քառակուսի մետր մակերեսով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամաս ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» N 2366-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) Նախաբանում «բնակելի տունը» բառերից հետո լրացնել «ընդհանուր համատեղ» բառերով:
2) Որոշման 1-ին կետում «օտարել» բառից հետո լրացնել «ընդհանուր համատեղ» բառերով:

Восстановимая подпись

X

**2025թ. ք.Գյումրի** Подписано: GHUKASYAN VARDAN 3001610840 **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«20» նոյեմբերի 2025 թվականի N2484-Ա

## 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-ԻՆ ՏՐՎԱԾ N178/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմեն Բադալյանին Գյումրի քաղաքի Ֆորալբերգի փող. N 4/12 հասցեում բնակելի տան ( ընդ. մակ.- 119.0 քառ.մ; երկրորդ կատեգորիա) և պարսպի (կառ. մակ.- 17.2քառ.մ), նոր կառուցման աշխատանքների կատարման համար 2023 թվականի հոկտեմբերի 6-ին տրվել է N178/23 շինարարության թույլտվությունը:

Կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու՝ ավարտական ակտի տրամադրման նպատակով ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքները ավարտելու համար:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. 2023 թվականի հոկտեմբերի 6-ին տրված N178/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել մինչև ավարտված շինարարական օբյեկտն ընդունող հանձնաժողովի աշխատանքների ավարտը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**
**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025 թվականի N 2483-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾԻ 6-ՐԴ ԹԱՂԱՄԱՍ № 3/9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 118.47 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (92.6 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 155.1 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԻՆԵ ԵՆՈՔԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արագածի 6-րդ թաղամաս № 3/9 հասցեի 155.1 (մեկ հարյուր հիսունհինգ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի շինությունը հանդիսանում է Գյումրի համայնքի սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 04082025-08-0056 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» պրենքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 20-ի № 53-Ա որոշումը և քաղաքացի Կարինե Ենոքի Սարգսյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի ապրիլի 07-ին № 6110 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Արագածի 6-րդ թաղամաս № 3/9 հասցեի 118.47 (մեկ հարյուր տասնութ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (92.6 (իննսունութ ամբողջ վեց հարյուրերրոդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 594600 (հինգ հարյուր իննսունչորս հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի շինությունն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Կարինե Ենոքի Սարգսյանին:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Արագածի 6-րդ թաղամաս № 3/9 155.1 (մեկ հարյուր հիսունհինգ ամբողջ մեկ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 2888 (երկու հազար ութ հարյուր ութսունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 447928 (չորս հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր քսանութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Կարինե Ենոքի Սարգսյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի ՀանրապետությանԳյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Կարինե Ենոքի Սարգսյանը պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Կարինե Ենոքի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Կարինե Ենոքի Սարգսյանի միջոցների հաշվին:

2025-10-17 16:59:42 GMT+4
Վավերացված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2482-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՍԱՎՈՅԱՆ № 19/12 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 171.97 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (143.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, 274.4 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍՎԵՏԼԱՆԱ ՀԱԿՈԲԻ ԲՈՉԿԱՐՅՈՎԱՅԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Սավոյան փողոց № 19/12 հասցեի 274.4 (երկու հարյուր յոթանասունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի շինությունը հանդիսանում է Գյումրի համայնքի սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 24072025-08-0029 վկայական):

Հաշվի առնելով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60 հոդվածով նախատեսված հողերի վրա, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Անշարժ գույքի հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» պրենքի 7-րդ հոդվածի 8-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայքնի ավագանու 2024 թվականի հունիսի 20-ի № 53-Ա որոշումը և քաղաքացի Սվետլանա Բոչկարյովայի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի դեկտեմբերի 29-ին № 280140 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Ա. Սավոյան փողոց № 19/12 հասցեի 171.97 (մեկ հարյուր յոթանասունմեկ ամբողջ իննսունյոթ հարյուրերրորդական) քառակուսի մետր արտաքին (143.4 (մեկ հարյուր քառասուներեք ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով 733624 (յոթ հարյուր երեսուներեք հազար վեց հարյուր քսանչորս) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով բնակելի շինությունն ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Սվետլանա Հակոբի Բոչկարյովային:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա. Սավոյան փողոց № 19/12 հասցեի 274.4 (երկու հարյուր յոթանասունչորս ամբողջ չորս տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը հողամասի օտարման պահին կազմում է 1878 (մեկ հազար ութ հարյուր յոթանասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 515323 (հինգ հարյուր տասնհինգ հազար երեք հարյուր քսաներեք) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Սվետլանա Հակոբի Բոչկարյովային:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի ՀանրապետությանԳյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Սվետլանա Հակոբի Բոչկարյովան պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Սվետլանա Հակոբի Բոչկարյովային պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
5. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Սվետլանա Հակոբի Բոչկարյովայի միջոցների հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2481-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂԻ № 143/16 ՀԱՍՑԵԻ 121.88 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի № 143/16 հասցեի 121.88 (մեկ քսանմեկ ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Երևանյան խճուղի № 143/16 հասցեի 121.88 (մեկ քսանմեկ ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2025-10-17 16:55:16 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025 **թվականի** N2480-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Հ. ՇԻՐԱԶԻ ՓՈՂՈՑ № 9/1 ՀԱՍՑԵԻ 14.04 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ԵՎ ԹԵՔԱՀԱՐԹԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Հակոբյան փողոց № 29 հասցեի բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Արսեն Ռազմիկի Ավդալյանին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2422734 վկայական):

Աստղիկ Արսեն Ռազմիկի Ավդալյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Հակոբյան փողոց № 29 հասցեին կից Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06102025-08-0023 վկայական) Գյումրի քաղաքի Հ. Շիրազի փողոց № 9/1 հասցեի 14.04 (տասնչորս ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասն՝ աստիճաններ և թեքահարթակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Նկատի ունենալով փաստացի իրադրությամբ պայմանավորված քաղաքաշինական հնարավորությունը, հաշվի առնելով, որ տրամադրված հողամասը գտնվում է հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 481-րդ հոդվածի 6-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի № 62-Ա որոշումը և Արսեն Ռազմիկի Ավդալյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականի հունվարի 17-ին N 592 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Արսեն Ռազմիկի Ավդալյանին աստիճաններ և թեքահարթակ կառուցելու նպատակով կառուցապատման իրավունքով տրամադրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի Հ. Շիրազի փողոց № 9/1 հասցեի 14.04 (տասնչորս ամբողջ չորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը 20 (քսան) տարի ժամկետով և տարեկան վարձավճարի չափ սահմանել 36504 (երեսունվեց հազար հինգ հարյուր չորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Սահմանված կարգով կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ համայնքապետարանի աշխատակազմի բյուջեի եկամուտների հավաքագրման բաժին):
   1) Պարտավորեցնել Արսեն Ռազմիկի Ավդալյան.
   2) Աստիճաններ կառուցելու համար սահմանված կարգով Գյումրի համայնքի ղեկավարին ներկայացնել հաստատված ձևի հայտ ճարտարապետահատակագծային առաջադրանք ստանալու համար:
   3) Համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա Հայաստանի Հանրապետության «Քաղաքաշինության մասին» օրենքի և այլ նորմատիվ, իրավական փաստաթղթերի պահանջների համաձայն, սեփական միջոցներով պատվիրել նախագծային փաստաթղթեր ու սահմանված կարգով ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինթույլտվություն:
   4) Շինաշխատանքները նախագծով սահմանված ժամկետներում ավարտելուց հետո շինարարության ավարտը ներկայացնել փաստագրման:
3. Պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը կատարել Արսեն Ռազմիկի Ավդալյանի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Արսեն Ռազմիկի Ավդալյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-17 16:53:14 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025 թվականի N 2479-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ա. ՏԻԳՐԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ № 11/12 ՀԱՍՑԵԻ 101.49 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոց № 11/12 հասցեի 101.49 (մեկ հարյուր մեկ ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Տիգրանյան փողոց № 11/12 հասցեի 101.49 (մեկ հարյուր մեկ ամբողջ քառասունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2025-10-17 17:02:00 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2478-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԵԾ ԲԵՐԴ ԹԱՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ 85.92 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 397.8 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԷԴՎԱՐԴ ԳԱՌՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ, ԼԻԼԻԹ ՎԱՀԱՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մեծ Բերդ թաղամասում գտնվող 397.8 (երեք հարյուր իննսունյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը կառուցվել է 85.92 (ութանասունհինգ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում են քաղաքացիներ Մարինե Հակոբի Ավետիսյանը, Յուրիկ Խաչատուրի Ավետիսյանը և Աննա Յուրիկի Խաչատրյանը:

Քաղաքացի Մարինե Հակոբի Ավետիսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ հողամասի և շինությունների նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ տունը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ, համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածի և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով քաղաքացի Մարինե Հակոբի Ավետիսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 11 սեպտեմբերի 2025 թվականին № 13621 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացիներ Մարինե Հակոբի Ավետիսյանը (ծնված 1956 թվականի հուլիսի 02-ին), Յուրիկ Խաչատուրի Ավետիսյանը (ծնված 1954 թվականի փետրվարի 10-ին) և Աննա Յուրիկի Խաչատրյանը (ծնված 1981 թվականի մայիսի 20-ին) համատեղ ընդհանուր սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Մեծ Բերդ թաղամասում գտնվող 397.8 (երեք հարյուր իննսունյոթ ամբողջ ութ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և նրա վրա առկա 85.92 (ութանասունհինգ ամբողջ իննսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությանների նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Մարինե Հակոբի Ավետիսյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-17 16:50:58 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

mID

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2477-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ ՓՈՂՈՑ N 10 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1855-Ն որոշման՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոց N 10 հասցեի բնակելի շենքի զբաղեցրած 0,1231 (զրո ամբողջ հազար երկու հարյուր երեսունմեկ տասհազար երորդական) հեկտար մակերեսով հողամասը տրամադրել շենքի պահպանման և սպասարկման համար, համաձայն կից տրվող հողամասի հատակագծի:

2025.10.17 17:05:33 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«17» հոկտեմբերի 2025 **թվականի** N 2476-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 04-Ի N 1858-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի 2025 թվականի հուլիսի 18-ի թիվ Զ/926-2025 զեկուցագիրը և այն հանգամանքը, որ տարածքը ազատ է կառուցապատումից՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի հուլիսի 04-ի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի «Քաղ. Հակոբ Հովհաննիսյանին ժամանակավոր տաղավար տեղադրելու նպատակով Գյումրու համայնքին պատկանող Տ.Մեծի փող. թիվ 8/4 հասցեի 20.0 քառ.մ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին» N 1858-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

2025-10-17 17:07:37 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» հոկտեմբերի 2025 թվականի N 2475-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ N 248/15 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՉԵՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հաշվի առնելով քաղաքացի Գուրգեն Մինասյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հոկտեմբերի 08-ին N 15528 թվագրմամբ) և այն հանգամանքը, որ տարածքը ազատ է կառուցապատումից՝ **որոշում եմ.**

1. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ չեղարկել Գյումրի քաղաքի Աբովյան փողոց N 248/15 հասցեի հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 16122021-08-0054 վկայականը:

2025-10-17 17:10:32 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«17» նոյեմբերի 2025 թվականի №2474-Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿՈՄԻՆՏԵՌՆԻ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 6 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №25102021-08-0028) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Կալիպսե Սարգսյանի դիմումը տքագրված №15218 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության բաժանման սխեմաները՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Կոմինտեռնի փողոց 3-րդ նրբանցք 6 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №25102021-08-0028) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **155.62** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կոմինտեռնի փողոց, 3-րդ նրբանցք, 6 բնակելի տուն**
2) **126.38** քառակուսի մետր մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները հասցեավորել՝
**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կոմինտեռնի փողոց, 3-րդ նրբանցք, 6/2 բնակելի տուն**

16:26:31 GMT+4
ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«17» նոյեմբերի 2025 թվականի №2473-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ 6/3 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №19122023-08-0097) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Մանուկ Գորգինյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №15259 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Մ ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի բաժանման սխեման և հատակագծերը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Ա. Մանուկյան փողոց 6/3 հողամաս հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №19122023-08-0097) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **99.71** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Մանուկյան փողոց, 8/8 հողամաս**

2) **101.31** քառակուսի մետր մակերեսով հողամասը հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ա. Մանուկյան փողոց, 8/9 հողամաս**

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025 թվականի №2472-Ա

### ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 1 ԹԱՂԱՄԱՍ 4Բ ՇԵՆՔ N12 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ 72.3 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, շինությունների հատակագիծը ու բնութագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Գյումրի քաղաք, Թբիլիսյան խճուղի 1 թաղամաս 4բ շենք N12 բնակարան հասցեագրությամբ 72.3 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով համայնքապատկան անշարժ գույքին պետական գրանցման ներկայացնելու նպատակով տրամադրել հասցե՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Թբիլիսյան խճուղու 1-ին թաղամաս, 4բ շենք, 12 բնակարան**

2025.10.17 16:38:31 GMT+4
Ստորագրված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025 **թվականի** N2471-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՓՈՂՈՑ № 32/1 ՀԱՍՑԵԻ 2425.59 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Գործարանային փողոցի № 32/1 հասցեի 2425.59 (երկու հազար չորս հարյուր քսանհինգ ամբողջ հիսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի, ներառված է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերի ցանկում:

Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխելու հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Գյումրի քաղաքի Գործարանային փողոցի № 32/1 հասցեի 2425.59 (երկու հազար չորս հարյուր քսանհինգ ամբողջ հիսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

Восстановимая подпись

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** Подписано: GHUKASYAN VARDAN 3001610840 **Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

**2025թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025 թվականի N2470-Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ N57 ՀԱՍՑԵԻ 137.99 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱՑԻ ԱՌԿԱ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՎԱԾ 269.28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Պարոնյան փողոց N57 հասցում, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, 269.28 (երկու հարյուր վաթսունինը ամբողջ քսանութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում կառուցվել է 137.99(հարյուր երեսունյոթ ամբողջ իննսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տուն, որի նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հողհատկացման հիմքերը և այն փաստացի տիրապետում և օգտագործում է քաղաքացի Հերմինե Հակոբի Կիրակոսյանը:

Քաղաքացի Հերմինե Հակոբի Կիրակոսյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին հողամասի և բնակելի տան նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով և հիմք ընդունելով քաղաքացի Ալբերտ Հարությունյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2024 թվականին N12727 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Ճանաչել քաղաքացի Հերմինե Հակոբի Կիրակոսյանի (ծնված 1990 թվականի հունվարի 13-ին) սեփականության իրավունքը Գյումրի քաղաքի Պարոնյան փողոց N57 հասցի 269.28 (երկու հարյուր վաթսունինը ամբողջ քսանութ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի և դրա վրա առկա 137.99(հարյուր երեսունյոթ ամբողջ իննսունինը հարյուրերրորդական) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի տան նկատմամբ:
2. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հերմինե Հակոբի Կիրակոսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից :

2025-10-17 10:27:55 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025 թվականի N2469 Ա

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՆԱՀԻՏ ԵՂԻԱԶԱՐԻ ԵՎ ԴԱՎԻԹ ՎԱՉԱԳԱՆԻ ՖԱՐԶԱԴՅԱՆՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑ № 72 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ 1.93 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ջիվանու փողոց № 72 հասցեի բնակելի տունը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Անահիտ Եղիազարի և Դավիթ Վաչագանի Ֆարզադյաններին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 2748483 վկայականի):

Քաղաքացի Դավիթ Վաչագանի Ֆարզադյանը դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ Գյումրի քաղաքի Ջիվանու փողոց № 72 հասցեի օրինական կառուցված բնակելի տան պահպանման և սպասարկման համար զբաղեցրած 1.93(մեկ ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասն իրեն օտարելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, հաշվի առնելով, որ հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի ցանկում, հնարավոր չէ օտարել աճուրդով, որպես առանձին գույքային միավոր, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 16-ի № 102-Ա որոշումը և հիմք ընդունելով քաղաքացի Դավիթ Վաչագանի Ֆարզադյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի հունիսի 3-ին № 7240 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացիներ Անահիտ Եղիազարի և Դավիթ Վաչագանի Ֆարզադյաններին օտարել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենն պատկանող Գյումրի քաղաքի Ջիվանու փողոց № 72 հասցեի բնակելի տան պահպանման և սպասարկման համար զբաղեցրած 1.93(մեկ ամբողջ իննսուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:
2. Օտարվող հողամասի ուղղակի վաճառքի գին սահմանել տվյալ հողամասի կադաստրային արժեքի չափով, որը հողամասի օտարման պահին կազմում է 10514(տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 1.0(մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 20292(քսան հազար երկու հարյուր իննսուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սահմանված կարգով կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր (պատասխանատու քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման և պայմանագրի նոտարական վավերացման ծախսերը կատարել քաղաքացիներ Անահիտ Եղիազարի Ֆարզադյանի և Դավիթ Վաչագանի Ֆարզադյանի միջոցների հաշվին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Դավիթ Վաչագանի Ֆարզադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Восстановимая подпись

X

2025թ. ք.Գյումրի

Подписано: GHUKASYAN VARDAN 3001610840 Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«17» հոկտեմբերի 2025 թվականի N2468-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի N1929-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 27-ի «Քաղաքացի Ռիտա Մնացականի Հովհաննիսյանին պատկանող Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N204 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 34.26 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 5.55 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N1929-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել որոշման մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին NԿ-30092025-08-0069 որոշում);

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի օգոստոսի 27-ի «Քաղաքացի Ռիտա Մնացականի Հովհաննիսյանին պատկանող Գյումրի քաղաքի Լ.Մադոյան փողոց N204 հասցեի բնակելի տան հողամասում ինքնակամ կառուցված 34.26 քառակուսի մետր ներքին մակերեսով շինություններն օրինական ճանաչելու և օրինական հողամասին կից ավել օգտագործվող 5.55 քառակուսի մետր մակերեսով հողամասի կարգավիճակի մասին» N1929-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

